ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1—2, 1945 *Общественные науки*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ[1]

«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

Հնագույն ժամանակներից մինչև XVIII դարի վերջը: Թուլյատրված է ՀՍՍՌ ԼԺԿ-ի կողմից որպես ձեռնարկ միջնակարգ դպրոցների համար: Արմ-ֆանի հրատարակչություն, Երևան, 1943 թ., 271 էջ, պատասխանատու խմբագիրներ՝ Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ.

Երկար տարիներ մեր դպրոցները զուրկ էին սեփական ժողովրդի պատմությունն ուսումնասիրելու հնարավորությունից՝ համապատասխան ձեռնարկի բացակայության պատճառով: Նման ձեռնարկները վաղուց էին աշակերտության և ընթերցողների լայն շրջանների առաջին անհրաժեշտության նվազագույն և անհետաձգելի պահանջը դարձել: Վերջապես 1943 թ. լույս տեսավ ձեռնարկը, որը տանջակ հազարավոր մարդկանց կողմից ընդունվեց մեծ ջերմությամբ:

Տողերիս գրողը նույնպես հազարավոր ուրիշների հետ ի սրտե ողջունում է հայ ժողովրդի պատմության ձեռնարկի լույսընծայումը և համոզված լինելով, որ առաջին հրատարակությունը միաժամանակ վերջինը չի լինելու, ընդառաջում է խմբագրության ցանկությանը անել իր մի քանի դիտողությունները, որոնք կարող են նկատի առնվել հետագա հրատարակությունների ժամանակ:

1. Էպոխաների բաժանման հարցը

1. Պատմության ամեն մի ձեռնարկում առաջին կարևոր հարցը էպոխաների բաժանման և նրանց այս կամ այն անունը տալու հարցն է: Բաժինները գլխագրելը կարող է երկրորդական հարց թվալ, սակայն բաժինների և ենթաբաժինների անունները ածանցվում են այս կամ այն էպոխայի գլխավոր բովանդակությունից և ցույց են տալիս, թե որքանով ճիշտ է բնորոշվում տվյալ ժամանակաշրջանը, որն է նրա հիմնական էությունը, որով նա զանազանվում է նախորդ և հաջորդ դարաշրջաններից, այլ խոսքով, ինչով է հիմնավորվում տվյալ շրջանաբաժանումը, և արդյոք ճշմարտացի՞ է դըրսևորում պատմական իրադրությունը: Հայ ժողովրդի պատմության էպոխաների մարքսիստական շրջանարաժանումը ձեռնարկում կատարված է

[1] Խմբագրությունը համաձայն չէ գրախոսողի մի քանի կարծիքների և դիտողությունների հետ: Գրախոսականը տպագրվում է մտքերի փոխանակության կարգով.
«Տեղեկագրի» խմբ.

առաջին անդամ, ե թերությունները ու վիճելի հարցերն անխուսափելի են։

Հայ ժողովրդի պատմության ձեռնարկի առաջին մասը բաղկացած է երկու բաժնից՝ առաջին բաժին—Հին շրջան և երկրորդ բաժին—Միջին դարեր։ Հին շրջանն ընդգրկում է հնագույն ժամանակներից սկսած մինչև V դարի պատմությունը, իսկ միջին դարերը՝ V-ից մինչե XVIII դարերի պատմությունը։ Ինչն է հիմք ծառայել V դարը որպես հին և միջին դարերի սահմանագլուխ որոշելուն, ինչով է միջին դարերին վերագրված V դարը տարբերվում հին շրջանի մեջ մտնող IV դարից. նրանով, որ Հայաստանը Արշակունիների թագավորության տապալումից հետո գրկվեց իր քաղաքական անկախությունից, ե կենտրոնացված ու գորեղ պետություն Հայաստանում չառաջացավ։ Հայ Արշակունի թագավորներին փոխարինեցին պարսից մարզպաններն ու արքաները, որոնց նույնպես չհաջողվեց Հայաստանը վերջնականապես իրենց կենտրոնական իշխանությանը ենթարկել։ Երկրի ֆինանսական ե ռազմական վարչությունները, մասամբ և քաղաքացիական վարչությունը համարյա անփոփոխ մնացին, իսկ ֆեոդալիզացիայի վաղուց դոյություն ունեցող պրոցեսը շարունակեց իր հետագա էվոլուցիան։ Ունեցվածքային և դասակարգային հարաբերություններն էական փոփոխությունների չենթարկվեցին և շարունակեցին իրենց դանդաղ զարգացումը նույն ֆեոդալական հասարակության ներքսում։ Այսպիսով ոչ մի կերպ չի հիմնավորվում V դարը հին շրջանի և միջին դարերի սահմանագլուխ համարելը։

Ի՞նչ ելակետ պետք էր ունենալ։

Մարքսիստական պատմագիտությունը ելնում է այն փաստից, որ հասարակության զարգացումն առաջ է ընթացել պրոգրեսիվ կերպով իրար փոխարինող տարբեր հասարակա-տնտեսական ֆորմացիաների առաջացման ե անհետացման ուղիով։ Պատմության հիմնական շրջանաբաժանումները համապատասխանում են տարբեր հասարակա-տնտեսական ֆորմացիաների գոյության ժամանակաշրջանին։ Ընդունված է մինչֆեոդալական հասարակությունների պատմությունը համարել մարդկության պատմության հին շրջան, ֆեոդալական հասարակության պատմությունը միջին դարերն են կազմում, իսկ կապիտալիստական հասարակության հաղթանակով սկսվում է նոր պատմությունը։

Հայ ժողովրդի պատմության ձեռնարկում էլ պետք էր հետևել այս միակ հիշտ և գիտական սկզբունքին։ Մինչդեռ ձեռնարկում Արշակունյան թագավորության շրջանի պատմությունը շարադրված է որպես ֆեոդալական հասարակության պատմություն, բայց անջատված է միջին դարերից ե վերագրված պատմության հին շրջանին։

Ձեռնարկի հեղինակներն ու խմբագիրները երևի առաջնորդվել են նրանով, որ եվրոպական միջին դարերն սկսվում են IV ե V դարերից, բայց չէ՞ որ պատմական միևնույն երևույթները և էպոխաները տարբեր կոնտինենտներում և տարբեր երկրներում միևնույն ժամանակ չեն առաջանում և միևնույն տևողությունը չեն ունենում։ Անդրկովկասում և Իրանում ֆեոդալական հասարակությունն ավելի վաղ է առաջացել, քան Եվրոպայում և Ռուսաստանում։ Միջին դարերի շրջանը Հայաստանում սկսվում է հայ Արշակունիների թագավորությամբ (մ. թ. առաջին դարեր), այստեղից էլ պետք էր սկսել ձեռնարկի երկրորդ բաժինը՝ միջին դարերը, Արշակունի-

ներից մինչև Բագրատունյան թագավորության շրջանը, անվանելով վաղ միջնադար։

2. Երկրորդ թերությունը էպոխաների բաժանման գծով այն է, որ մի քանի դարաշրջաններ պարզապես անվանված են դարերով, օրինակ՝ «Հայաստանը II և III դարերում», «Հայաստանը V—VII դարերում» և այլն։

Գլուխների և ենթագլուխների վերնագրերը պետք է որոշակի կերպով ցույց տան տվյալ ժամանակաշրջանի հիմնական էությունը և նրա գլխավոր հատկանշական կողմը։ Ջեռնարկի ծրագիրը կազմելիս, ինչպես և տեքստը շարադրելուց հետո գլխագրերը ճշգրտելիս՝ հեղինակները և խմբագիրները երբեմն ընտրել են հեշտ, բայց սխալ ուղի։ Հիրավի, «Հայաստանը II և III դարերում», «Հայաստանը IV դարում» ոչինչ չասող վերնագրեր են։ Այս կարգի թերություններն ուղղելու նպատակով կարելի կլիներ հետագա հրատարակությունների ժամանակ նկատի ունենալ մեր հետևյալ առաջարկները։

1. Յոթերորդ գլխի երկրորդ ենթաբաժինը՝ «Հայաստանը II և III դարերում» (էջ 75)—վերնագրել «Հայաստանը բուֆեր պետություն, II—III դարեր»։

2. Նույն գլխի երրորդ ենթաբաժինը «Հայաստանը IV դարում» (էջ 81)—վերնագրել «Արշակունյան պետության կենտրոնացման և ամրապնդման փորձերը IV դարում»։ Նկատի ունենալով, որ հայկական պետության ամրապնդման փորձերն սկսվում են Տրդատ III-ի թագավորության ժամանակ, անհրաժեշտ է նրա թագավորության շրջանը և քրիստոնեություն ընդունելը յոթերորդ գլխի երկրորդ ենթաբաժնից տեղափոխել երրորդ ենթաբաժին։

3. Ութերորդ գլուխը «Հայաստանը V—VII դարերում» (էջ 105)—վերնագրել «Հայաստանը Սասանյան Պարսկաստանի և բյուզանդական կայսրության տիրապետության ներքո. հայերի պայքարը անկախության համար»։

Այս գլխի առաջին ենթաբաժինը վերնագրել «Մարզպանական Հայաստանը» (այս ենթաբաժինը դասագրքում բացակայում է, պետք է այն ստեղծել։ Գլխում ցույց տրված առաջին ենթաբաժինը դարձնել երկրորդ ենթաբաժին և նրա վերջին հատվածը—«484 թ. դաշնագրության նշանակությունը» (էջ 113) հանել և փոխարենը գնել «450—451 և 481—484 թ. թ. ժողովրդական ապստամբությունների նշանակությունը» հատվածը ընդարձակ շարադրությամբ (2—3 էջ), ուր ցույց տալ, որ այդ ապստամբությունների շնորհիվ Սասանյաններին չհաջողվեց Հայաստանը վերջնականապես իրենց ենթարկել։ Հայաստանը պահպանեց իր ինքնուրույնությունը, դրանով իսկ ապահովվեց երկրի տնտեսական բարգավաճումն ու շինարարությունը և նշանավոր կուլտուրական զարգացումը, որը բերեց ոչ միայն ազգային կուլտուրայի ձևավորմանը, այլև նրա ծաղկմանը, ինչպես գրի, դրականության, հասարակական մտքի, նույնպես և նյութական կուլտուրայի՝ իր ժամանակի համար բարձր աստիճանի զարգացմանը։

4. Ութերորդ գլխի երկրորդ ենթաբաժինը «Արևմտյան Հայաստանը V—VI դարերում» (էջ 113)—վերնագրել «Արևմտյան Հայաստանի կցումը բյուզանդական կայսրությանը VI դարում»։

5. Իններորդ գլուխը «Հայաստանը VII—IX դարերում»—վերանվանել «Հայաստանը արաբական լծի տակ»։

6. Նույն իններորդ գլխի երկրորդ ենթաբաժինը «Հայաստանի նվաճումը»—վերանվանել «Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում», նկատի ունենալով, որ այս շրջանում (VII դ. երկրորդ կեսը) դեռ չի հաստատվում արաբական խալիֆաթի ծանր լուծը, երկրի կարգացումն անփոփոխ ընթանում է նախկին հունով, և Հայաստանի տնտեսական ու կուլտուրական վերելքը դեռ շարունակվում է։ Այս ենթագլխում անհրաժեշտ է ընդարձակել Դրիդոր Մամիկոնյանի իշխանության շրջանը, Հայաստանի անկախության փորձը և ավելացնել Սմբատ Բագրատունու պայքարը բյուզանդական կայսրության ոտնձգությունների դեմ։

Այս ենթագլխի երկրորդ կեսը՝ սկսած «Խալիֆաթի վարած քաղաքականությունը Հայաստանում» հատվածից՝ անջատել և ընդարձակելով դարձնել առանձին ենթագլուխ, վերնագրելով՝ «Արաբական խալիֆաթի լծի հաստատումը Հայաստանում»։

7. Տասնմեկերորդ գլուխը՝ «Հայաստանը XI—XIII դարերում»—վերանվանել «Հայաստանը սելջուկյան տիրապետության և Զաքարյանների իշխանության շրջանում»։

8. Տասնհինգերորդ գլուխը՝ «Հայաստանը XV—XVIII դարերում»—վերանվանել՝ «Տնտեսական-քաղաքական և կուլտուրական անկման երկարատև շրջան Հայաստանում (XV—XVIII դ. դ.)»։

Առաջարկված փոփոխությունները, թվում է, համապատասխանում են պատմական իրականությանը։ Այդ փոփոխություններին համապատասխան որոշ փոփոխություններ և լրացումներ պետք է կատարվեն և ձեռնարկի տեքստում։

II. Ձեռնարկի բովանդակության վերաբերող առանձին ուղղներ

1. Ձեռնարկի երկրորդ գլխում («Նախնադարյան համայնական հասարակությունը Հայաստանում») թույլ է տրված մեթոդոլոգիական սխալ։ Նախնադարյան համայնական հասարակության պատմությունը շարադրված է որպես նյութական կուլտուրայի պատմություն։ Այստեղ կարելի է գտնել պալեոլիթ, նեոլիթ, բրոնզե և, նույնիսկ, երկաթե դարեր, իսկ հասարակության պատմությունն՝ իր համապատասխան շրջանաբաժանումներով՝ բացակայում է։ Այդ գլխի հեղինակ հանգուցյալ պրոֆ. Ե. Համուելյանը բերում է Կ. Մարքսի խոսքերը, որ նախնադարյան շրջանն «ստորաբաժանվելով ըստ գործիքների և զենքերի նյութեղենի՝ տրոհվում է քարե դարի, բրոնզե դարի և երկաթե դարի» (Մարքս)։ Այնուհետև կարդում ենք ձեռնարկում. «Նախնադարյան հասարակության աշխատանքի գործիքների տեխնիկայի զարգացման այս աստիճաններից յուրաքանչյուրին համապատասխանում են որոշ արտադրական և սոցիալական հարաբերություններ»։ Մարքսիզմն այստեղ չի հասկացված։ Արտադրության գործիքների, ավելի ճիշտ՝ արտադրության միջոցների զարգացման աստիճանով պայմանավորվում է արտադրության եղանակը, իսկ վերջինով որոշվում են արտադրական հարաբերությունները հասարակական-տնտեսական այս կամ այն ֆորմացիայում, բայց այդ չի նշանակում, թե հասարակության պատմությունը կարելի է փոխարինել աշխատանքի գործիքների զարգացման պատմությամբ կամ հնագիտությամբ։ Ճիշտ է, քանի դեպի հին ժամա-

նակներն ենք գնում, այնքան մեծանում է հնագիտության դերը և տեղը պատմության մեջ, սակայն հնագիտությունը օժանդակ պատմական գիտություն է և չի կարելի նրանով փոխարինել պատմությունը։ Հենց այս սխալն էլ թույլ է տրված ձեռնարկում։

Ավելին. քարե, բրոնզե և երկաթե դարերով պատմությունն անելը ձեռնարկում բերել է նրան, որ տոհմական հասարակությունը և հելլենական, մետանական, սուրարական և արաբական հասարակություններին վերաբերող մի շարք հարցեր իրար են խառնված (տես էջ 23, 24, 25), այսինքն դասակարգային հասարակության շրջանին վերաբերող երևույթների մասին խոսվում է մինչդասակարգային տոհմական հասարակության պատմությունն անելիս։

Զարգացած բրոնզե գործիքները հայանի են եղել և՛ տոհմական հասարակությանը՝ նրա վերջին շրջանում, և՛ հնագույն դասակարգային հասարակություններին։ Ի՞նչպես կարելի է անել առհասարակ բրոնզե դարի պատմությունը, որպես մարդկային հասարակության մի առանձին էպոխայի պատմություն։ Էլ չենք խոսում «երկաթե դարի», «որպես» պատմական առանձին էպոխայի մասին, որը միանգամայն անհեթեթ է։

Հետագա հրատարակությունների ժամանակ այս երկրորդ գլուխը պետք է արմատապես վերամշակել ժամանակակից պատմական գիտության պահանջների համաձայն։ Այդ գլխում պետք է շարադրել Նախնադարյան հորդայի, նախնադարյան կոմունիզմի և տոհմական հասարակության քայքայման պատմությունը։ Այս ենթագլուխներում իրենց տեղը կգտնեն և՛ պալեոլիթը, և՛ նեոլիթը, և՛ բրոնզե դարը, և՛ առաջին երկաթե գործիքների երևան գալը, մայրիշխանական ու հայրիշխանական տոհմը, ինչպես և վայրենությունից բարբարոսության անցումը։ Մի խոսքով՝ այս գլխում պետք է տոհմական հասարակության պատմությունը տալ իր ամբողջ բազմակողմանիությամբ, որ հայտնի է պատմագիտությանը, ճիշտ է, գերազանցապես նյութական կուլտուրայի և նրանից հանած եզրակացությունների շնորհիվ, բայց ոչ թե հասարակության պատմությունը փոխարինել նյութական կուլտուրայի պատմությամբ։

2. Երրորդ գլխի առաջին ենթարաժնում՝ «Նախաուրարտական հասարակությունն»—սուրարիները, մետանիները և, մանավանդ, նայիրյան ցեղախմբերն ամենուրեք անվանվում են ժողովուրդներ (էջ 27, 28, 29)։ Ավելի ճիշտ կլիներ նրանց անվանել ցեղախմբեր և ցեղային միություններ՝ նկատի ունենալով, որ նրանց էթնիկական կազմավորման սկսված պրոցեսը չհանգեց նրանց՝ որպես ժողովուրդ ձևավորվելուն, իսկ նրանց կազմավորվող պետությունը ցեղային ռազմական միությունից այն կողմը չանցավ։

3. Ուրարտական հասարակության քաղաքական պատմությունը (էջ 29—32) չափազանց չոր ու ցամաք և թերի է շարադրված. իսկ Արգիշտի II-ի և Ռուսաների թագավորությունների նշանավոր շրջանները բոլորովին չեն հիշատակված։ Առհասարակ Ուրարտուին վերաբերող պարագրաֆը թույլ է և վերամշակման կարիք ունի։

4. Վեցերորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ «Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունն Արտաշիսյան թագավորության ժամանակաշրջանում» (էջ 68)—Հայաստանը ցույց է տրված որպես ֆեոդալիզմի երկիր։ Այդ չի համապատասխանում պատմական իրականությանը և արհեստականորեն

ստեղծված կարծիք է։ Արտաշիսյան թագավորության ժամանակաշրջանը անցման շրջան է հանդիսանում իր հողատիրական արիստոկրատիայով և ստրկատերերի դասով—մի կողմից և համայնքի անդամ, բայց արդեն հարկատու գյուղացիությամբ ու ստրուկների դասով—մյուս կողմից։ Այս շրջանում նոր միայն սկսում են առաջանալ ֆեոդալական հարաբերություններ, որոնց առկայությունը Հայաստանում դարեր հետո միայն կարելի է հավաստել։

Այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «ֆեոդալական հարաբերությունների զարգացման պրոցես» (էջ 68, տող 13), «կալվածատերերի ծայրահեղ շահագործում» (էջ 68, տող 23—24), պետք է հանել 68-րդ էջից և փոխարենը դնել՝ «ֆեոդալական հարաբերությունների առաջացման պրոցես», 23—24-րդ տողերը ձևակերպել՝ «որոնք մեղմացնում էին գյուղացիության շահագործումը հողատերերի կողմից», «Ազնվականություն», «կալվածատերեր», «հողատեր իշխաններ» տերմինները հանել և փոխարինել «հողատերեր», «հողատիրական դաս» և «ստրկատերեր» տերմիններով։

5. Սխալ կլիներ հայերի պարսկական կամ հռոմեական (իսկ հետո բյուզանդական) օրիենտացիայի հարցը բացատրել լոկ թագավորական տան և մի շարք իշխանների ներքին հակասություններով (էջ 83), կամ այն բանով, որ Տրդատը Հռոմի «միջնորդությամբ» էր թագավոր դարձել (էջ 81)։ Հայերի՝ այս կամ այն օրիենտացիան ընդունելը մի քանի պատճառներ ունի. ներքին հակասությունները դրանցից մեկն էին, բայց ոչ գլխավորը։ Այն հիմնականում բացատրվում է երկրի անկախությանը արևմուտքից և արևելքից սպառնացող վտանգի դեմ առնելու ձգտումով։ Երբ հռոմեական աշխարհակալությունն էր Հայաստանի անկախությանը վտանգ սպառնում, նրա դեմ առնելու համար հայերը պարթևական Պարկաստանի օժանդակությունն էին որոնում։ Իսկ երբ թուլացած հռոմեական կայսրությունն այլևս վտանգավոր չէր, ընդհակառակը, սպառնալիք գալիս էր նոր առաջացած Սասանյան հզոր պետության կողմից, հայերը Արևելյան հռոմեական կայսրության օժանդակությունն էին որոնում։ Բայց կար և մի երրորդ դեպք, երբ վտանգը երկու կողմից էլ էր սպառնում։ Այս դեպքում նախարարների մի մասը, որն իր տնտեսական և անձնական շահերով կապված էր Բյուզանդիայի հետ և իր կալվածներն ու կալվածատիրական իրավունքները պահպանելու հույսը բյուզանդական կայսրության հետ էր կնդում, անցնում էր Բյուզանդիայի կողմը, իսկ մյուս մասը՝ նույնպիսի պատճառներով պարսկական օրիենտացիային էր հարում։ Բյուզանդիայի առաջխաղացման դեպքում Արևմտյան Հայաստանի նախարարներն էին տուժելու, իսկ Պարսկաստանի առաջխաղացման դեպքում՝ Արևելյան և Հարավային Հայաստանի նախարարները։ Բացի այդ՝ մեծ նշանակություն ուներ, թե հզոր հարևաններից որ մեկից ինչ սպասելիքներ կարող էին լինել։ Վերջապես, հաճախ կավախնձոր դարձած Հայաստանը չէր կարող չօգտագործել Պարսկաստանի և Հռոմի (Բյուզանդիայի) միջև գոյություն ունեցող հակամարտությունները՝ իր գոյությունը պահպանելու համար։ Ինչ վերաբերում է այդ երկու հզոր հարևաններին, ապա նրանք չէին կարող իրենց սրցակցության ընթացքում հաշվի չառնել ստրատեգիական խոշորագույն նշանակություն ունեցող և բավականաչափ պատկառելի ռազմական ուժ ներկայացնող Հայաստանը։

Այս նույն գրությունը շարունակվում է և հետագայում՝ արաբա-բյուզանդական մրցակցության ժամանակ։

6. Պակասավոր է լուսաբանված և քրիստոնեության հարցը։ Ճիշտ է, որ հայերը քրիստոնեություն ընդունելով կապվեցին քրիստոնեական Արևմուտքի հետ, բայց քրիստոնեություն ընդունելու պահին հայերը բյուզանդական կայսրությանը չէին ապավինում, որքանով քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն դարձավ Միլանի էդիկտից տաս տարի, իսկ առաջին տիեզերական ժողովից (որը որոշեց քրիստոնեությունը բյուզանդական կայսրության պետական կրոնը դարձնել) քսաներկու տարի առաջ։ Այն շրջանում, երբ Սասանյան կայսրության կողմից էր հիմնական վտանգը սպառնում, հայերը քրիստոնեությունն օգտագործում էին Բյուզանդիայի օժանդակությունն ստանալու համար։ Իսկ հետագայում, երբ քրիստոնյա Բյուզանդիան է ձգտում Հայաստանն իր տիրապետությանը ենթարկել (VI դարի երկրորդ կեսից), հայերը մերժում են բյուզանդական քաղկեդոնական դավանանքը և ընդունում են միաբնակությունը։ Այսպիսով, քրիստոնեական դավանանքով հայերը սահմանազատվում են պարսիկներից, իսկ հակաքաղկեդոնական դավանանքով՝ Բյուզանդիայից։ Հայերի ընտրած դավանանքը հայ ժողովրդի գոյության և պատմական բախտի համար խոշոր դեր է խաղացել։ Այս հարցերը տեղ չեն գտել ձեռնարկում։

7. Տասնհինգերորդ գլխի երրորդ և չորրորդ ենթարաժիններում կան լուրջ թերություններ. սեֆյան Պարսկաստանի և սուլթանական Թյուրքիայի լծերի ծանրությունը հայ ժողովրդի ուսերին՝ թույլ է ցույց տրված, առանձնապես թույլ է շարադրված հայ ժողովրդի իրավական անազատությունն ու ծանր վիճակը, պարսից և թյուրքական պետությունների, ինչպես և խաների ու փաշաների հրեշավոր կամայականություններն ու բռնությունները։ Վերջապես չի արված այն եզրակացությունը, որ Հայ ժողովուրդը պարսից և թյուրքական լծի տակ զրկված էր տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման պատմական հեռանկարներից և կանգնած էր փակուղու առջև։

III. Կուլտուրային վերաբերող հարցեր

Ձեռնարկում ամենից ավելի թույլ կերպով է շարադրված հայ ժողովրդի հնամենի նշանավոր կուլտուրան, և բոլոր հատվածները, ուր խոսվում է կուլտուրայի մասին, վերամշակման կարիք ունեն։

1. Ամենից առաջ սխալ է Արտաշիսյան և Արշակունյան թագավորությունների՝ միանգամայն տարբեր շրջանների տարբեր կուլտուրաները միևնույն հատվածում շարադրելը։ Անհրաժեշտ է Արտաշիսյան թագավորության շրջանի կուլտուրան, որը համարյա իր արտահայտությունը չի գտել հիշված ընդհանուր հատվածում, առանձին շարադրել և առանձին հատվածով զետեղել վեցերորդ գլխի վերջում։ Անհրաժեշտ է ցույց տալ, որ Արտաշիսյան-Տիգրանյան թագավորությունը հելլենիստական կուլտուրայի թագավորություն էր։ Այստեղ խոսել և հայկական հեթանոսական կրոնի մասին։

2. Արշակունյան թագավորության շրջանի կուլտուրայի շարադրության մեջ պետք էր ցույց տալ, որ Հայաստանի կուլտուրայի հելլենիստա-

կան գիծն արդեն տիրապետող չէ, այլ թուլանում է, պարթևական գիծն է զգալի աեղ բռնում, բայց գլխավոր հատկանշական կողմն այն է, որ այս շրջանում տեղական ազգային կուլտուրայի առաջացման սենդենցն է առկա դառնում։

3. V—VII դարերի կուլտուրան շարադրելիս պետք է միանգամայն որոշակի կերպով ցույց տալ, որ այս շրջանում բոլոր գծերով ձևավորվում և իր ծաղկումն է ապրում տեղական ազգային կուլտուրան, որը նշանավոր ներդրում է հանդիսանում մարդկության կուլտուրական գանձարանում և իր ազդեցությունն է տարածում հարևան երկրներում (բյուզանդական կայսրություն, Վրաստան, Ադվանից աշխարհ)։

4. «Կուլտուրան VIII—IX դարերում» հատվածն անմիջապես սկսվում է «Պատմագրություն» պարագրաֆով։ Թվում է, թե չի կարելի այդպես վարվել։ Պետք էր նախ ցույց տալ, որ արաբական լծի շրջանում (VIII դարի սկզբից մինչև IX դարի վերջերը) Հայաստանի տնտեսական անկմանը զուգադիպում է և կուլտուրական անկումը։ Մտավոր կուլտուրան մի կերպ շարունակում է կյանքի նշաններ ցույց տալ, իսկ նյութական կուլտուրան, հատկապես ճարտարապետությունը, համարյա մեռյալ կետի վրա է կանգնում։ Բագրատունյան թագավորության շրջանում միանգամայն բարենպաստ պայմաններ են ստեղծվում հայկական կուլտուրայի զարգացման համար, և կուլտուրական զարգացման մի նոր նշանավոր վերելք է տեղի ունենում։ Պետք էր, վերջապես, ցույց տալ, որ այս շրջանի համար հատկանշական է արաբական կուլտուրայի ազդեցությունը։

5. XI և հետագա երկու դարերի կուլտուրան շարադրված է «Հայաստանը մոնղոլական լծի տակ» գլխից հետո, և ցույց է տրվում մի նոր, նշանավոր կուլտուրական վերելք։ Իսկապես Հայաստանն այդպիսի կուլտուրական վերելք ունեցել է, բայց XII—XIII դարերում, բուն Հայաստանում և Կիլիկիայում։ Սելջուկյան տիրապետությունը մի պահ միայն խախտեց Հայաստանի տնտեսական և կուլտուրական վերելքը, իսկ մոնղոլական լծի շրջանում սկսվում է Հայաստանի տնտեսական և կուլտուրական անկման ու քայքայման շրջանը։ Չի կարելի XII—XIII դարերի կուլտուրական նշանավոր վերելքը շարադրել XIV դ. կուլտուրայի հետ մեկտեղ և զետեղել մոնղոլական տիրապետության շրջանից հետո։ Ճիշտ կլիներ XII—XIII դարերի կուլտուրան շարադրել առանձին և զետեղել տասներկուերորդ (Կիլիկիայի հայկական թագավորությունը) գլխի վերջում։

XIV դարում բուն Հայաստանում կուլտուրան, ինչպես և տնտեսությունը, անկում են ապրում և տնտեսական, մանավանդ կուլտուրական որոշ աշխուժություն տեղի է ունենում կամ բուն Հայաստանից դուրս (Կիլիկիա), կամ նրա ծայրամասերում։ Հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի որբանը հանդիսացող Այրարատյան նահանգում (Արարատյան դաշտ, Շիրակ) XIV դարում անկում և ամայացում է տեղի ունենում, որը զուգակցվում է արտագաղթով, անմարդաբնակ են դառնում և ավերվում են հայ ժողովրդի պատմության մեջ նշանավոր դեր խաղացած հռչակավոր Անին և Դվինը։ XIV դարի կուլտուրան (ներառելով մինչև XV դարի առաջին քառորդը) կարելի է առանձին շարադրել և զետեղել տասնչորսերորդ գլխից հետո։

6. Կրթության մակարդակի և դպրոցների մասին խոսելիս՝ հեղինակ-

ները հեռացել են պատմական մոտեցում ունենալուց, թերագնահատել են դպրոցների խաղացած դերը և կրթության զգալի ծավալն ու բարձր մակարդակը այն ժամանակ (IX—XI դ. դ.), երբ Եվրոպայում կրթությունը բոլորովին էլ հարգի չէր, իսկ դպրոցներ ու կրթված մարդիկ հազվագյուտ էին։ Պետք էր ցույց տալ, որ X—XI դարերում Հայաստանում հանդես է գալիս բարձրագույն դպրոցը, ուր ուսուցանում էին փիլիսոփայություն, մարտասանություն, քերականություն, աստղագիտություն, բժշկություն, աստվածաբանություն և այլն։ Այդ դպրոցները X—XI և XII—XIII դարերում տվել են գիտնականների մի ամբողջ շարան, որը գիտակ էր հունա-հելլենական փիլիսոփայությանը, վաղ քրիստոնեության շրջանի՝ հեթանոսական փիլիսոփայության հետ հարընչվող աստվածաբանությանը և կանգնած էր իրեն ժամանակակից գիտության բարձրության վրա։ (181-րդ էջում բերված պատկերի տակ պետք էր դնել «Սանահնի բարձրագույն դպրոցը (հեմարան)» մակագրությունը։

223-րդ էջում կարդում ենք. «...Շատ քիչ մարդկանց էր վիճակվում գրագետ դառնալ, որովհետև դպրոցները լայն ցանց չունեին և եղածներում էլ սովորում էին գլխավորապես հոգևորականների, ազնվականների և մասամբ գյուղացիների զավակները»։ Նման ձևակերպումը հիշտ չէ, նախ այն պատճառով, որ պատմական մոտեցումը դանց է առնված. ասես, հեղինակը (Ս. Պողոսյան) արդի տեսակետով է առաջնորդվել։ Հետաքրքիր է հարց տալ հեղինակին, թե X—XIII դ. դ. աշխարհի որ անկյունում դպրոցների ցանցն ավելի ստվար էր ու կրթական մակարդակը ավելի բարձր, քան Հայաստանում և Վրաստանում։ Երկրորդ աշխատավորական դասերից սովորողների թիվն այնքան էլ փոքր չէր, որքան հեղինակն է կարծում։ Պետք է շփոթել այն բանը, որ բարձր կրթություն ստացող գյուղացին հետագայում հոգևորական էր դառնում։ Համենայն դեպս այդ ժամանակաշրջանում տասնյակ գիտնականների մեծագույն մասը ոչ հոգևորական, ոչ էլ իշխանական ծագում են ունեցել։ Վերջապես, երրորդ՝ մոռացության է տրված այդ ժամանակաշրջանում դգալի մեծություն ներկայացնող քաղաքային դասը (վաճառականներ. վարպետներ), որի գրագիտության աստիճանը բավական բարձր էր։ Պետք էր երկու խոսք ասել և կանանց գրագիտության մասին։

IV. Քաջեր գիտություններ

1. Բացի ցույց տրված հիմնական բացերից ձեռնարկի մեջ թույլ են տրված նաև մի շարք մանր թերություններ ու սխալներ։ Այսպես, օրինակ, առաջին գլխում պետք էր ավելի որոշակի ցույց տալ բուն Հայաստանի սահմանները (էջ 7)։ Ուրմիո լճի մասին ասված է. «Ուրմիո լիճը (հնումը կապուտան ծով) գտնվում է պատմական Հայաստանի հարավ-արևելյան մասում։ Հայկական բարձրավանդակի ամենամեծ լիճն է» և այլն։ Իուրս է գալիս, որ Ուրմիո լիճն ամբողջովին Հայաստանի մեջ էր մտնում, մինչդեռ այդ լճի մեծ մասը մտնում էր Պարսկաստանի տերիտորիայի մեջ և Հայաստանին էին պատկանում նրա հյուսիս-արևմտյան ափերը և հյուսիսային ծայրը։ Արշակունյան թագավորության շրջանի քարտեզում էլ (էջ 103) Պարսկահայքը ավելի հարավ-արևմուտք է ցույց տրված, քան այն եղել է, իսկ Փայտակարանը՝ ավելի հյուսիս-արևելք է տարված։

66-րդ էջում պետք էր բերել ավանդություններ թատերական ներկայացման մասին Արտաշատում և՝ թե ինչպես է Ցագոն դերասանը ներկայացնում հռոմեական տրիումվիրներից Ակի և զորավար Կրասոսի գլուխը պարթևների և հայոց արքաներին։

120-րդ էջում պետք էր ցույց տալ Դվին նշանավոր մայրաքաղաքի առաջացումը։

131-րդ էջում ասված է. «Երկարաժյա պատերազմներից թուլացած Պարսկաստանն ու Բյուզանդիան...» և այլն։ Դուրս է գալիս, որ այդ աերությունների թուլացման հիմնական պատճառը պատերազմներն են եղել, որ միանգամայն սխալ է։

133-րդ էջում պետք էր ցույց տալ Թեոդորոս Ռշտունու խաղացած նշանավոր դերը, ցույց տալ, որ նա հայ ժողովրդի նշանավոր հերոսներից մեկն է եղել։

135-րդ էջում 702-703 թ. թ. ապստամբությունը շարադրված է սխալ հաջորդականությամբ։ Առաջինը տեղի է ունեցել Վարդանակերտի ճակատամարտը, որին հետևել է ապստամբությունը Վանանդում և այնուհետև Վասպուրականում, Ռշտունիքում (Գուկանքի ճակատամարտը)։ Մինչդեռ ձեռնարկում ապստամբության շարադրությունն սկսված է Գուկանքի ճակատամարտով, ապա Վարդանակերտի դեպքերն են շարադրված և վերջում՝ Վանանդի դեպքերը։

Այսպիսով՝ ապստամբության վերջում տեղի ունեցած դեպքերը շարադրված են որպես ապստամբության սկիզբ և հակառակը։

Տասերորդ դլխի առաջին հատվածը՝ «Բագրատունի առաջին թագավորները» (էջ 146)—ճիշտ կլիներ անվանել «Բագրատունյան թագավորության հիմնումը։ Պայքար անկախության համար»։ Այս հատվածում անհրաժեշտ է ավելի շեշտել Աշոտ II-ի (Երկաթ) դերը Հայաստանի անկախության համար մղված պայքարում։

Գագիկ I-ի մասին խոսելիս (էջ 157) պետք էր անել այն եզրակացությունը, որ նա փորձում է վերամիավորել Հայաստանը և միասնական կենտրոնական պետություն ստեղծել, որը նրան չի հաջողվում, թեև որոշ քայլեր ապարդյուն չեն անցնում։

«Հայաստանի տնտեսական վիճակը XV—XVI դարերում» պարագրաֆում (էջ 239) պատմական անցքերի կապը կտրված է։ Պետք էր ցույց տալ, որ տնտեսական անկումն ու քայքայումն այն դարերում, մոնղոլական տիրապետության շրջանում, սկսված անկման ուղղակի շարունակությունն էին կազմում և լրացրին այն։

Մեխլուի գեկավարած գյուղացիական շարժման մասին խոսելիս (էջ 243) պետք էր ցույց տալ, որ այդ շարժումն ուներ ոչ միայն սոցիալական, այլև ազգային բնույթ։ Ժողովուրդն ապստամբել էր ոչ միայն եկեղեցու և հոգևորականության ծանր շահագործման առկայության հետևանքով, այլև այն պատճառով, որ ժողովուրդն ապավինում էր եկեղեցուն (ուրիշ կենտրոն կամ ուժ չկար), իսկ եկեղեցին համերաշխել էր օտար տիրապետողների հետ. այստեղից և ցասումը եկեղեցու դեմ՝ ոչ միայն սոցիալական, այլև ազգային-ազատագրական պայքարի արտահայտությունն էր հանդիսանում, թեև թույլ և ոչ որոշակի ձևով։

Հայկական վիպասանությունից մեզ հասած հազվագյուտ հատվածներից

բերված է մի կարճ Արտաշեսին վերաբերող երգից (էջ 52) և Վահագնի ծնունդը (էջ 101), երկու դեպքում էլ անհաջող թարգմանությամբ, որով այդ հրաշալի բանաստեղծական կտորներն արժեզրկվել են։ Պետք էր դնել այդ հատվածների հաջող կատարված թարգմանությունը և լավ կլիներ տողատակի ծանոթագրությամբ բերել նրանց գրարար տեքստը, որն այնքան էլ խրթին չէ և դժվար չէ հասկանալ։

2. Ձեռնարկում պատահում են նաև անհասկանալի ու անորոշ տեղեր։ Օրինակ, 37-րդ էջում կարդում ենք. «Այդ (Ուրարտական։ Բ. Ա.) կուլտուրան ժառանգեցին այն նոր ժողովուրդները, որոնք հրապարակ իջան Ուրարտուի անկումից հետո և համաձուլվեցին նրանց հետ։ Անհասկանալի է՝ ինչ ում հետ համաձուլվեց։ Ավելի շուտ դուրս է գալիս՝ նոր հրապարակ իջած ժողովուրդները համաձուլվեցին ուրարտացիների հետ, մինչդեռ պետք է հակառակը լինի։

65-րդ էջում կարդում ենք. «Կրասոսը, արհամարհելով ռազմական արշավի ուղղության վերաբերյալ իր ժամանակին Արտավազդի տված խորհուրդները, հավակնոտ մեծամտությամբ շարունակեց իր արշավանքը Միջագետքի անապատներով»։ Բանի՞ մարդ կհասկանա, թե ինչ խորհուրդների մասին է ակնարկվում։ Պետք էր իր տեղում ցույց տալ, որ Արտավազդը, ելնելով իր երկրի շահերից, խորհուրդ էր տալիս Կրասոսին պարթևների դեմ արշավել, անցնելով Հայաստանի միջով։ Կամ՝ բոլորովին հարկավոր չէր ակնարկներով խոսել։

92-րդ էջում գործ է ածված «արտատնտեսական ճնշում» տերմինն առանց այն բացատրելու։ Միջակ ընթերցողներից ե աշակերտներից քչերը կհասկանան։ Ճիշտ նույն ձևով գործածված է «աշխարհագիր» բառը (էջ 106)։ Քչերը կհասկանան, պետք էր բացատրել։

Հաճախ գործածվում են լեռների, դաշտերի և այլ աշխարհագրական անուններ, առանց ցույց տալու նրանց տեղերը։ Սրանք եթե հայ ընթերցողի համար անհասկանալի են, ապա ռուս ընթերցողների համար (սպասվում է ձեռնարկի ռուսերեն հրատարակությունը) չինական այբուբեն կդառնան։

3. Ձեռնարկում թույլ են տրված նաև փոքրիկ անճշտություններ ու սխալներ։ Օրինակ՝ 50-րդ էջում չափազանցված է Հռոմի դերը Սելևկյան պետության քայքայման հարցում։ Այս չի կարևորը, շեշտը պետք է դնել Սելևկյանների ներքին թուլության վրա, որ այդ պետությունը առաջացել էր արհեստականորեն տարբեր երկրներ ու ժողովուրդներ բռնի կերպով իրար կցելու եղանակով։ Պարթևները, բակտրիացիք և պոնտացիք ապըստամբելով՝ անջատվեցին Սելևկյան պետությունից, երբ դեռ Հռոմը Արևելքի վրա ոչ մի ուշադրություն չէր դարձնում։ 50-րդ էջում պետք էր պարզապես ասել, որ հայերը ապստամբության համար հարմար ժամանակ ընտրեցին, երբ հռոմեական աշխարհակալությունն ընդհարվեց Սելևկյան պետության հետ, որի դեմ, բացի հայերից, ապստամբել էին նաև Բիթանիան, Կապադովկիան և ուրիշները։

73-րդ էջում կարդում ենք.«... Հռոմի ֆորում կոչված հրապարակում»... և այլն։ Այդ միևույն է, թե ասենք «հրապարակ կոչված հրապարակում», որովհետև լատիներեն «ֆորում» բառը հրապարակ է նշանա-

կում։ Պետք էր գրել՝ «Հռոմի ֆորումում» և փակագծում դնել «հրապարակում»։

81-րդ էջում գրված է. «...Բյուզանդիոնը Սև ծովի (Իոսֆորյան նեղուցում)»։ Պետք է լինի՝ «նեղուցի ափին»։

Նույն 81-րդ էջում կարդում ենք. «...Արևելյան հռոմեական պետություն»... Պետք է լինի՝ «Արևելյան հռոմեական կայսրություն»։

87-րդ էջում կարդում ենք. «... Պարսկական զորքերը, Մեհրուժան Արծրունի և Վահան Մամիկոնյան հայ դավաճան նախարարների գլխավորությամբ»... և այլն։ Պարսկական զորքը գլխավորում էին պարսիկ զորավարները, իսկ Մեհրուժանն ու Վահանը ուղեկցում էին և տեղանքն էին ցույց տալիս։

107 և 109 էջերում շփոթված է պարսկա-բյուզանդական դաշինքի տարեթիվը. 107-րդ էջում ցույց է տրված 441 թիվը, իսկ հաջորդ էջում՝ 442 թիվը՝ միևնույն դաշնագրի կնքման համար։

125-րդ էջում խոսվում է Ղազար Փարպեցու Թղթի մասին. «Թուղթ» բառի փոխարեն պետք էր գործածել «նամակ»։

126-րդ էջում կարդում ենք. «Մովսես Խորենացին... համարվում է հայոց պատմության հայրը», պետք է լինի՝ «պատմագրության հայրը»։

Արաբական զորավար Մուավիայի և Հայաստանի իշխան Թեոդորոս Ռշտունու միջև կնքված պայմանագրի տարեթիվ գրականության մեջ համարվում են 651, 652 և 653 թվերը. տարբեր գիտնականներ տարբեր տարեթիվ են ընդունել առանց հիմնավորելու այն։ Ձեռնարկում բերված է 651 թիվը։ Մեր մի հոդվածում քննության առնելով այդ տարեթվի հարցը այն համոզմանն ենք եկել, որ այդ պայմանագիրը կնքվել է 652 թվին[1], որը և խմբագրության ուշադրությանն ենք առաջարկում։

139-րդ էջում (ներքևից 4-րդ տող) Եգերաց աշխարհը (Մինգրելիան) նույնացված է Արխազիայի հետ։ Մինչդեռ Եգերաց աշխարհը հետագայում (X դար) մտավ Արխազիայի թագավորության մեջ։

147-րդ էջում Արձեշի ճակատամարտը վերագրված է 1000 թվին։ Որքան մեզ հայտնի է, այդ ճակատամարտը տեղի է ունեցել 998 թվին։

169-րդ էջում կարդում ենք. «Գեորգի թագավորին օգնություն է ցույց տալիս Հովհաննես Սմբատը»։ Ճիշտ չէ։ Հովհաննես Սմբատը խոստանում է օգնություն ցույց տալ, բայց չի կատարում իր այդ խոստումը։

170-րդ էջում (տող 9) Անիի Ծաղկոցաձորը «Ծաղկաձոր»Ն անվանված։

208-րդ էջում ավելի ճիշտ կլինի գործածել «Իրան» և ոչ «Պարսկաստան» անունը։

237-րդ էջում Զուղան անվանված է ավան. պետք էր քաղաք անվանել։

V. Ձեռնարկի նկարների առթիվ

Ամեն մի ձեռնարկում նկարները զարդարանքի համար չեն զետեղվում. նրանք հանդիսանում են տեսանելի ապացույցներ՝ տեքստում շարադրված այս կամ այն դրույթի կամ եզրակացության համար, ցույց են տալիս այն,

[1] Տես՝ «Ժամանակագրական դիտողություններ», ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր» № 1, 1941 թ., էջ 61—73։

ինչ նկարագրությամբ չի կարելի ցույց տալ. հետևաբար, նկարները պետք է ընտրվեն այնպես, որպեսզի նրանք արտահայտեն այս կամ այն էպոխայի բնորոշ կողմերը։ Մեծ նշանակություն ունի նաև նկարները ճիշտ զետեղելը ձեռնարկի համապատասխան բաժիններում, կամ գլուխներում։ Նկարները պետք է օրգանապես կապված լինեն ձեռնարկի տեքստի հետ և լրացնեն այն։

Ժամանակագրական թերություններ թույլ են տրված և նկարների ընտրության և նրանց զետեղման գործում։ Ավելորդ չենք համարում անել հետևյալ դիտողությունները։

Մեծ և Փոքր Մասիսների նկարն անհաջող է։

19-րդ էջում պետք էր դնել մի գոլմենի և մի հին բնակավայրի նկարներ։

22-րդ էջում պետք էր զետեղել մի կրոմլեխի գծագիր նկար։

25-րդ էջում պետք էր զետեղել Արագածի ջրանցքային հնագույն սիստեմի սխեմատիկ նկարը, իսկ նկ. 15-ը փոխադրել 24-րդ էջը։

Նկ. 21-ը բերել 26-րդ էջը։

Նկ. 22-ի տեղ դնել ուրարտական շրջանի կերամիկայի նկար։

Ուրարտական կուլտուրայի բաժնում պետք է դնել երկու նկար ուրարտական բրոնզե գահույքի մասերից, իսկ նկ. 24-ը տանել 34-րդ էջը։

Նկ. 29-ը տանել նկ. 27-ից առաջ։

Նկ. 36-ը տանել նկ. 35-ի կողքը։

82-րդ էջում դնել Ադցի Արշակունիների դամբարանի նկարներից մեկը (որսի տեսարան)։

Վեցերորդ գլխից հետո ստեղծելով Արտաշեսյան թագավորության կուլտուրայի առանձին բաժին, այնտեղ տանել նկ. 46 և 48։ Այնտեղ դնել և մարմարե ձեռքի բեկորի նկարը։

87-րդ էջում դնել Մուշեղ Մամիկոնյանի նկարը (ռելյեֆը Լեման-Հաուպտի գրքից)։

Նկ. 55 տանել 126-րդ էջը, դուրս նետելով նկ. 53-ը, իսկ նկ. 55-ի տեղը 128-րդ էջում հատկացնել Դվինում բացված խոյակին։

125-րդ էջում դնել 7-րդ դարի որևէ վիմական արձանագրություն։ Այս գլխում բերել մի կոթող Թալինից և Օձունի կոթողը։

130-րդ էջում պետք էր դնել մի բուսական ռելյեֆի և մի արծվի նկարները Զվարթնոցից։

9-րդ գլխում պետք էր զետեղել մի պատմագրի և մի փիլիսոփայի (Ղևոնդ, Ստեփանոս Այուսեցի) ձեռագրերի լուսանկարը։ Այստեղ բերել և նկ. 71-ը, քանի որ և այս շրջանին է պատկանում և այստեղ ավելի հարմար է։

Բագրատունիներին նվիրված գլխում բերել Շիրակավանի եկեղեցու նկարը, Անիի համապատասխան հատակագիծը և Բագրատունիների պետական դերը (առյուծ)։

Զաքարյաններին նվիրված գլխում բերել մի բերդի և Սանահնի, Տաթևի ու Կեչառիսի վանքերի խմբական հուշարձանների նկարները, նկատի ունենալով, որ այս շրջանում ֆեոդալական խոշոր տների հետ միասին առաջ են գալիս և խոշոր հոգևորական ֆեոդալների օջախներ։

Այս շրջանի մինիատյուրներից բերել սոցիալական կյանքն ու կենցաղն արտահայտող մի քանի նկարներ։

XII—XIII դարերի կուլտուրայի բաժինը բերել նաև նկ. 70-ը, որն իր տեղումը չի։ Այստեղ դետեղել և Գոշավանքի խաչքարերից մեկի նկարը։

235-րդ էջում դնել Զուզայի խաչքարերի մի խմբական նկարը։

241-րդ էջում դնել Էջմիածնի մայր վանքի ընդհանուր նկարը։

Թվում է, թե ձեռնարկը կշահեր նկարազարդման ոճով առաջարկված լրացումներն ու փոփոխությունները կատարելու դեպքում։

Մեր այս հոդվածում արված դիտողություններից և առաջարկներից առանձին հարցեր անվիճելի և անառարկելի չենք համարում, մանավանդ՝ հոդվածը գրելիս մեր ձեռքի տակ ոչ մի գրականություն չենք ունեցել բացի ձեռնարկից, սակայն համոզված ենք, որ արված դիտողություններն ու առաջարկները, անկասկած, օգտակար կլինեն, եթե նկատի առնվեն ձեռնարկի հետագա հրատարակությունների ժամանակ։

Ցանկալի է, որ վիճելի համարվող հարցերը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտը քննության և վիճաբանությունների առարկա դարձնի։

Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ